



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Թ. — ՇՐՋԱՆ ԻԱ.

1889

ՏԱՐԻ ԻՐ. ՍԵՊՏԵՄ. 30

ԿՐՈՆԱԿԱՆ



ՄԵՐ ՀՈԳՈՒ ԵՒ ՄՐՏԻ ՅՈՒՋՄՈՒՆԵՐԻ ՎՐԱՅ ՈՒՂԻՂ
ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՏԱԼՆ.

Ա.-Է. Մ. Ի2, 40, 41:

Յիսուս եկաւ իւր աշակերտների մօտ ու նրանց քնած գտաւ՝
և առաց Պետրոսին. « միթէ չէ.ք կարող մի ժամ ինձ հետ ար-
թուն մնալ »: Արթուն կացէ.ք և ազօթք արէ.ք, որ փորձու-
թեան մէջ չընկնէ.ք: Հոգիս յօժար է, բայց մօրմինս աւեր:

Երբոր մի լաւ մարդ, անիրաւութիւն տեսնելով, սաստիկ նեղանում է, կամ՝ ուրախանալու առիթնիր եղած միջոցին՝ բուրսովին անձնատուր է լինում ուրտիութեան, կամ այնպիսի մեծ աշէ ընկնում սիրտն, որ ուրիշներին կարծել է տալիս թէ՛ Աստուծոյ նախախնամութեան վրայ իւր ունեցած հաւատն անհաստատ է և պակաս, կամ թէ յանկարծ յաւելում է որ և իյէ իւր ուրիշ զգացմունքի սաստկութիւնից, շատ անգամ է պատահում, որ գուցէ սառնարիւն բնութեան տէր մարդիկ այդպէս շաւտ յուզուողին ամենեւին լաւ չեն առում: Նոյնպէս քիչ չէ պատահում, որ այդպիսի ըստ ինքեան լաւ, բայց շատ դիւրագգաց ու դիւրագրգիռ մարդիկ, յաւելելուց ու չափն անցկացնելուց յետոյ, էլ յանդիմանութիւն չի մնում, որ իրանք իրանց գլխին չթափեն ու իրանց յափշտակուելին ու խազից դուրս գալն իբրեւ իրանց կողմից արած մի մեծ յանցանք չհամարեն ու դառը կերպով չզղջան:

Շատ այդպիսի մարդիկ են եղել, որ՝ իրանց այդպիսի բնութիւն ունենալու պատճառով աշխարհից հեռացել են որ էլ այնչափ չը տարուեն բարկութիւնից, ուրախութիւնից ու սաստիկ ցաւելուց: Գլուխներն առել են, գնացել այնպիսի տեղ բնակուել, որ մենակ ապրեն, մարդու մէջ չլինեն: Վաղեքիւրի խուցերումն են իրանց կեանքն անց կացրել, կամ մեծ քաղաքների մէջ լինելով, ոչ ոքի հետ գնալ՝ գալ, նիստ ու կաց տնել չեն ունեցել: Ամեն գրգռուած զգացմունքը մարդուս փչացած բնութիւնն են համարել, որին՝ քանի ու քանի անգամ զուր և անօգուտ կիրպով դէմ դնելուց յետոյ, իրանց անընդունակ են տեսիլ աստուածային շնորհացն երբ և իյէ արժանանալու:

Քայց մարդուս սաստիկ յուզուիլը մեղք է արդեօք, կամ թէ Աստուած ուզում է, որ մեկը մեռածի նման անզգայ լինենք կեանքի ամեն արտաքին ներգործութիւններին, որ անում են մեզ վրայ: Մի՞թէ դատապարտելու արժանի՞ եմ ես, երբ որ ոչ միայն մի անպատկան, այլ և մի գարշելի բանի վրայ նեղանում եմ, ինձ զահել չկարողանալովս. կամ թէ երբ որ իմ սրտին մօտիկ ընկերների, քարեկամների ուրախութեանը մասնակից

եմ՝ լինում։ Միթէ Աստուծոյ պատուիրանն է, որ ես բոլոր իմ կեանքումս միշտ սաւեւասիրտ և անտարբեր լինեմ ու մնամ, կամ թէ այն տեղն ինձ հասցնեմ, որ թշխարհո ատեմ և իմ օրերս միշտ տխուր անց կացնեմ,

Ի հարկէ չէ, այստեղ մի սխալ կայ, որ ես անում եմ, Կարելի է մի փոքր բանի վրայ էլ չափից դուրս անհանգիստ լինելուցս ու հոգս անելուցս է, որ ինքս ինձ սաստիկ պոխարահում եմ, որ այնքան էլ պարսաւանքի արժանի չեմ, Խնչու որ մարդ ուս սրտի աւելի մեծ կամ փոքր յուզմունքն, եթէ մի մեղք լինէր, Աստուած ինքն այդ յուզմունքն ինձ տուած չէր լինիլ։

Եթէ որ սրտի յուզմունքը մեղք լինէր, սաստիկ վառ երևալայութիւն ու շատ սուր յիշողութիւն ունենալն էլ մեղք կը համարուէր։ Խնչու որ յիշողութիւնն ու երևակայութիւնն էլ շատ անգամ նոյնպէս շատ հեշտ են հանում մեղ ճանապարհից։ Ինչպէս որ հենց զգայականութիւնն էլ։ Եւ միթէ հաստատ կերպով կարելի է ասել, որ Աստուած մի մի մարդոյ այնպէս է օտեղծել, որ աւելի լաւ հենց ծնուել են, իսկ միւսներն՝ աւելի վատ։ Ես այնպիսի անտարբեր ու անվրդով բնութեան տէր մարդիկ եմ ճանաչում, որոնք որ անփութիւն են մնում։ Ի՞նչ սաստիկ ուրախանալ ունին՝ և ոչ սաստիկ տխրել։ Եւ միթէ ծերութեան հասակին հասած մարդն լաւ մարդ է հենց նրա համար աւելի, որ աղմկալից ուրախութիւններ այնքան չէ սիրում։ Ինչու որ այդ հակումն իւր երիտասարդ ժամանակն է ունեցել, իսկ այժմ չունի։ Միթէ երիտասարդն և օրիորդը, կամ այրն ու կինը պախարակելի են, որ իրանց կեանքի տանալաւ տարիքում իրանց մէջ անթերի ոյժ են զգում, և աւելի աշխոյժ են։

Մարդուս սրտի այլ և այլ յուզմունքն այնչափ մեծ նշանակութիւն ունին, որ կարժէ վրան մտածելը, Հէնց իմ սրտի հանգստութեան համար պէտք է, որ պարզ և սրոշ գաղափար ունենամ մեր ունեցած այս՝ այն զգացմունքների մեղանչական ու վնասակար՝ կամ ոչ մեղանչական և անվնաս լինելու մասին, և հասկանամ թէ՛ բաբեպաշտ և Աստուծոյ հանդիման

նեղուն համար պէտք է արդեօք իմ մէջս խեղդեմ իմ բնածին զգացմունքներս:

Արդէն իմ բանականութիւնն ասում է ինձ, որ այդ պիտի մի բան անել կարող չեմ ամենւից. բայց ասում են խոտապահանջ նախանձաւորները թէ՛ կարող եմ. շատ անգամ բեմիցն էլ քարոզում են:

Երբ որ մտիկ եմ տալիս իմ աստուածային ուսուցիչ Յիսուս Քրիստոսի վրայ, որ յաւիտեանական օրինակ է և պիտի լինի մեզ համար, բոլորովին ուրիշ կերպ եմ համազում. նա էլ հոգւոյ ու օրտի ամենաստտիկ յուզմունքից ազատ չէր: Պատմում է սուրբ աւետարանում թէ՛ ինչպէս օտտոիկ նեղացաւ, երբ որ Երուսաղեմի տաճարում նստած տեսաւ լուսնայափոխներին ու հատաւաճառներին, որ մատաղացու եզեր, ոչխարներ, աղաւնիներ էին ծախում: Զուանից խարազան շինեց՝ ու բոլորին էլ դուրս քշեց, ասելով թէ՛ իմ հօրս տունը վաճառատուն մի չինէք: Յիսուսի կեանքից առնուած ու պատմուած այս բանն իմ միտքս շատ անգամ լուրջ կերպով զբաղեցրել է: Որ սատտիկ նեղացած սրտով է արել այդ բանն, ուրանալ չենք կարող: Այո՛, սուրբ գրքում պարզ ասուած է թէ՛ երբ որ փարիսեցիք ուզում էին յանցանք դնել նրա վրայ, որ շաքաթ օրերը մտրդէր բժշկում, « իւր չորս կողմը մտիկ տուեց սատտիկ բարկութեամբ »: (Մարկ. Գ. 5.)

Ուրիշ ժամանակներում տեսնում ենք նորան սատտիկ տրիստութեան մէջ ընկած: Այո՛, մենք գիտենք, որ նա իւր մատնութեան այն սարսափելի գիշերը Զիթհնեաց սարի վրայ այնպէս տրտմած էր ու սիրտը կտրած, որ մահուան երկիւղից պակաս չէր, և այնքան ընկճուած էր երկիւղից ու տխրութիւնից, որ քրտինքն արիւնի կաթիլների նման էր թափւում: Բայց շատ անգամ էլ մասնակից էր լինում մարդոց ընկերակցան հրաւերների ու բախումների, և ուրախների հետ ուրախանում էր, ինչպէս որ Գալիլեացուց Կանայի հորսանիքումը գինին պակսեց, նա էր որ իրան անարժան բան չըհամարեց հրաշալի զօրութիւնով պակասը լրացնելու: Այո՛, նա շատ անգամ ճաշի էր գնում մեծատուն և ատուած հաւմայեցոյ

մաքսաւորներին՝ և արհամարհում էր խստասիրտ բարոյագէտ դատաւորների պարսաւանքը. « Յովհաննէս եկաւ », ասում էր նա, « չէր ուտում, չէր խմում: Այն ժամանակն ասացին թէ՝ « դե՛ւ կայ նրա մէջ »: Այժմ մարդու որդին է եկել, ուտում է, խմում է, « ահա », ասում են, « ուտող, խմող մարդ, մաքսաւորների ու մեղաւորների բարեկամ (Մտտ. ԺԱ, 18, 19) »: Այսպէս տեսնում ենք, որ Յիսուս, ինչ որ մարդկային բնութիւնից դուրս բան չէր, երբէք չէր խորշում կամ ուրուում, բայց սուրբ և անսուրբ բանն իրարից ջնկող և դրանց չափ ու սահմանը ցոյց տուող խիստ պատուելու խաղիցն էլ երբէք չէր անց կենում: Այս կողմից էլ Յիսուս անարատ մաքրութեան կատարելատիպ է և կլինի ամենիս համար:

Ամեն բան իւր չափն ունի: Մէր սրբի յո-դո-ն-ն է՛րք է, « քէ անյէլ չէն լինում »: մինչև ե՛րբ են ոչ միայն անմեղադրելի, այլ և գովելի:

Մեր սրտի յուզմունքն անբասիր կամ անմեղադրելի են և միանգամայն գովելի, « անի ո՛ր » Բարբէ Գովել Գործեր Կարարելու համար՝ Դեր « նեղած » « ժին նեցաւ էն » և այդ Դեր այժմ Բարոյապետ է՝ Բարձր նշանակաւորելի պահած է: Առանց յառ զգացմունքի հաղիւ թէ կարելի է պէտք եղած եռանդով մի լաւ բան առաջացնել, կամ մի լաւ գործ կատարել: Այո՛, Քրիստոս էլ յուզուեց, յարկացու, բայց ոչ թէ նախանձոտութիւնից ու լրէժխնդրութիւնից, ոչ թէ արծաթսիրութիւնից, այլ Աստուծոյ բանի համար, նրա սիրտը յուզում էր մարդոց խարդախութիւնն ու նրանց կեղծաւորութիւնն, երբ որ մի փոքրիկ՝ մի աննշան առաւտուրով Աստուծոյ սուրբ տաճարը պղծում էր: Ով որ դէմ է կենում անպատուութիւն բերող մի ցած բանի, առանց ոգեւորուելու մի աւելի ազնիւ բանի համար՝ չի կարող աւելի լուս բանի համար վատ բանին իւր ընդդէմ լինելը գործով ցոյց չառալ: Պէտք է մեր ոիրան աւելի բարձր և ազնիւ զգացմունքից շարժի, որ մեզ այժմ տայ ամեն արգելքների դէմ դնելու յաւ բանն առաջացնելու համար: Ով որ անարգ գործեր տեսնելով իւր աչքով, կարող է սրտով անլրդով մնալ և անտարբեր կերպով մտիկ տալ եղած բանին, միթէ այնպիսի մարդուն առաքինի

մարդ ասել կարելի է: Կամ ընդունակ էլ կլինէր նա ազնիւ գործեր կատարելու:

Ուրախութիւն անելն այն ժամանակն է գովելի, երբ որ մեր ուրախութիւն անելը մեզ պատիւ է բերում: ոչ թէ անպատուութիւն: «Ուրախ եղէք ուրախացողների հետ, ու լաց եղէք լացողների հետ»: ասում է մեզ Աստուծոյ խօսքն: Բ՛լ որ սրտով ուրախների հետ նրանց բաղդաւորութեանը վրայ սրտանց ուրախանալ չի կարող: այն մարդն ընդունակ չլինի անբաղդութեան մէջ եղողներին սրտանց ցաւակից լինել: Մթթէ երբ և իցէ դատապարտելի կարելի է համարել դիւր գալն մեզ այն բանի, ինչ որ գեղեցիկ է: և որոյ զարգանալը տեսնում ենք բնութեան մէջ: արհեստի ճարտարութեան՝ նուագարանի ձայների մէջ: Ո՞վ կուզենայ մեղքի բռն համարել և արհամարհել մասնակից լինելը մի հացկերոյթի, Յիսուս Քրիստոս էլ ետ չէր մնում ուրախ ահեկացող հացկերոյթից: Նա չէր ուզում, որ մարդս իւր օրերը տխուր, դժգոհ անց կացնի:

Որտի յուզուիլն այն ժամանակ է միայն մեղքի պատճառ ու մեղք բան: երբ որ միանում է աններելի ցանկութիւնների հետ: Թէև յուզուիլն ըստ ինքեան ոչ լաւ է և ոչ վատ: բայց բարի կամ չար յուզմունք են դառնում: մոտիկ տալով թէ՛ առաքինութեան են արդեօք ծառայում: թէ մոլութեան: Զորասիրտ մարդու՝ ուրիշին պատահած վատ բանի, կամ անբաղդութեան վրայ ուրախանալը՝ բարեօրոտ և օրինաւոր մորդու ուրախութեան հետ մէկ տեսնել ու հաւասարեցնել կարելի չէ: Քէնը հանելը, վիրաւորութեամբ տնախառութեան կատաղութիւնը, նախանձից ինքն իրան ուտելը՝ քրիստոնէի անիրաւութեան դէմ՝ արդար բարկութիւնը չէ: անբարոյականութեան դէմ նորա ազնիւ նախանձաւորութիւնը չէ: չարագործների տնամօթութեան դէմ նրա յուզուիլը, նեղանալը չէ: Ամեն օր անաւակ կեանք անց կացնելու ցանկութիւնն, արբեցողի չափից դուրս խմիչք խմելու համար խելքը տանել տալը, ղեղը մարդու իւր կատաղի մարմնական ցանկութիւններին յագուրդ տալը՝ պատճառին համեմատ համեստ կերպով ու բա-

խուժիւնն ու զուարճութիւնն վայելել չէ։ Այնպէս էլ տխրութիւնն ամենեւին մեղք բան չէ՝ կեանքի սիրտ շարժող ու մորմնքող դիպուածներու մ։ Ո՞վ կարող է մեղադրել մի մօր, երբոր դառն արտասուք է թափում մեծ յոյս տուող իւր գաւաղի դագաղի վրայ։ Կամ ո՞վ վատ կասի այրի մնացած մի կնոջ հասեցի, եթէ որ տարիներով էլ չի դադարում իւր սիրած մարդու գերեզմանի վրայ ծաղիկներ ցանելուց ու նորա շիրիմը միշտ զարդարած պահելուց։ Կամ ո՞վ կմեղադրի մեղ իրաւամբ, երբ որ՝ մի անտանելի հիւանդութիւնից տանջուելուց՝ ախ ենք քաշում, կամ թէ՛ երբ որ մենք մեր սենեցած չունեցածը կորցնելու վրայ սաստիկ ցաւում ենք ու գանգատուում։ Բայց ամեն բանն էլ իւր չափն ու սահմանն ունի։ Երբ ամբողջութիւնն էլ մեղքի մէջ քցող բան կդառնայ, երբոր յուսահատութեան, կամ Աստուծոյ իմաստութեան դէմ դժգոհութիւն յայտնելու տանի։ Քրիստոնեան, ամենասարսափելի փորձանքներ իւր գրելիւն հկած միջոցին էլ, մխիթարուելու և զօրանալու համար պիտի կմնայ իւր հաւատի մէջ, որ սննի մեր տանի Հօր վրայ ու չի կորցնի իւր հաստատ յոյժը յաւիտենական կեանք ու երջանկութիւն ժառանգելու։

Ուրիմն ըստ ինքեան մեղք բան չեն մեր սրտի ուրախութեան, կամ տխրութեան տանող յուզմունքը։ Բայց պէտք է շատ մեծ զգուշութիւն բանեցնենք և ոչ պակաս մեծ ջանք անենք, որ թէ՛ ուրախութիւնն և թէ՛ տխրութիւնը մեզ մեր խելքիցը չճանեն՝ և ինքներս մեզ չկորցնենք, չափ ու սահմանից դուրս գալով, մեր սրտի շատ լաւ՝ կամ շատ վատ տրամադրութեան մէջ լինելուց։ Ձափից դուրս մի՛ գաք ոչ մի կերպ և ոչ մի բանի մէջ՝ թէ՛ բարկութեան, թէ՛ տրտմութեան և թէ՛ ուրախութեան մէջ։ Աստուծոյ օրէնքի սահմանից շուտ ենք դուրս գալի միայն այն ժամանակ, երբ սր մեր ներքին յուզմունքից տարւում ենք։ Դիւրագգաց և դիւրագրգիւ մարդիկն՝ որքան էլ որ իրանց նպատակներն ազնիւ են եղել, որչափ էլ առիթներն անմեղ են եղել, որքան էլ սկզբումն իրանց ցանկութիւնները մտքուր հն եղել, հէնց շատ անգամ՝ պատահել է, որ յուսահատութեան սիրտ սեւացնող ըսպէսների հն տարեք իրանց հասցրել։ Ոչ մի ժա-

մանակ այնքան հարկաւոր չէ մեր իսկըն մեր գլխին պահելն, սրբան որ պէտք է մեր ունեցած բոլոր խոհանութիւնը չկորցնենք՝ մեր ուրախութեան, կամ տխրութեան չափն անց կենալու միջոցին: Հենց այդ ժամանակ են պատահում այն միշտ վտանգաւոր ժամերն, որ մեզ փորձութեան մէջ են քցում ու մեր խղճմտանքը ծանրացնում: Կենդանիների ու մեռելների դատաւոր՝ և ամեն տեղ ներկայ եղող մեր ստեղծող Աստուածը չմոռանալներս միայն դեռ կարող է այդ ժամանակ փրկել մեզ փորձանքից ու չարից:

Ամեն մի մորդ ինքն իրան փորձի՛ թէ՛ չափից դուրս վաւր-ւուն զգացմունքի տէր լինելն և թէ անզգայ բնութիւն ունե-նալը միակերպ վնասակար է: Նրկու տեսակ բնութիւնն էլ շատ անգամ՝ մարդու մարմնական կազմուածքից ու խառնուածքից են աւտջ գալի: Բայց հոգւոյ անյողդողդ և զօրաւոր կամքի հա-մար՝ ամենադժուոր բանին յաղթելն էլ կարելի է: Ով որ տըխ-րող, ո՞րտը չբացուող բնութիւն ունի, աշխատի լաւ և օգտա-կար որպէս և ուրտխացնող զբաղմունք ու ժամանակ անց կաց-նելու միջոցներ ունենայ որ ափփուի. ով որ խօսքը սրտին առնող, կամ բարկացող, խռովող, տխրող բնութեան տէր է, ջանք անի, որ ամեն մի բանի վրայ հանգիստ կերպով մտիկ տայ ու նոյնպէս էլ մտածի: Այդ բանն անելն կարողանալու համար առաջին քայլն այն է, որ ինքն իրան այնքան պահել կարողա-նայ, որ յանկարծ տաքացաւ՝ թէ չէ, ոչ խօսի, ոչ էլ որ և իցէ՛ բան անի: Ով որ ուրախ ընկերութեան մէջ ինքն իրան չափից դուրս մոռանում է, և՛ իւր ուրախութիւն սւնենալու միջո-ցին՝ իրան թոյլ է տալիս, որ խազից դուրս գայ, այնպիսի մարդն ամենեւին չափաի երթայ որ և իցէ՛ տեղ, առանց մոռումը դնե-լու և առանց ինքն իրան առաջուանից հաստատ խօսք տալու, որ իւր գնացած տեղը գտնուած ամեն մարդկանցից աւելի չա-փաւորն ու զգոտտն ինքն լինի: Ինքզ քեզ պահիր, չափիցդ մի՛ դուրս գալ, սրտիդ հանգստութիւնն էլ կորցրած չես լինիլ:

Երբ որ Յիսուս իւր գլխին գալիքի փոխանցական մեծ կէ-տումն էր, և Գէթսեմանէի որոշում տուող գիշերն եկել, հա-սել էր, երբ որ առաջիկայ իւր քաշելու անարգանքի, ցաւերի

ու չարչարանքի սարսափելի արհաւիրքն իրան պատել, պաշարել էին, ու իւր սիրտը մահուան երկիւղ ընկնելու չափ տըխրել էր, իւր տրամուծիւնիցն էլի չմոռացաւ իւր սրտի սիրելիներին՝ իւր աշակերտներին: Կրկին ու կրկին անգամ գնաց նրանց մօտ ու յորդորում էր այս խօսքերովս « արևոն կայէ՛ + և աղօթ + արէ՛, որ փայտ-լեռն ձեզ ղընկէ՛ + » : Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար:

Աշխարհիս Փրկչի ձայնը՝ Գէթսէմանէի գիշերուան տուանձնութիւնից միշտ էլ գալիս, հասնում է ականջիս, թէւ գարեր են անց կացել նորա բերնից դուրս եկած այս խօսքերի վրայ: Թող այդ ձայնը զօրաւոր կերպով ազդի, թափանցի սրտիս մէջ՝ իմ կեանքիս էլ փորձութեան ամեն ժամերում: Նրբ որ սրտիս ամեն զգացումներն այնպէս բարձրւում են, որ նրանց սաստկութեան առաջ հազիւ կարող եմ կանգնել, գէ՛մ գնել, որ չյաղթուիմ, Փրկչիս այն ձայնը թէ՛ « արևոն կայ և աղօթ + արա՛ », լուրջ կերպով ինձ կրկին զգաստութիւն տայ:— Քեզ կհնազանդեմ, ո՞վ իմ Փրկիչ: Պարգեւիր ինձ Քո հոգւոյդ իմաստութեան և զօրութեան շնորհը:

(Թարգմ. Գ. Ն. Ա.)

Ընդհանրական եկեղեցու կազմակերպութիւնն, որ տուել են նրան տիեզերական ժողովներն և նորա խանգարումն պապականութեան մէջ:

Պապականք և լատինասէր յունագաւառնք, յափշտակուած քրիստոնէական բոլոր եկեղեցեաց միութեան գաղափարով Հռովմայ պապի գլխաւորութեամբ, կարծում են, թէ աշխատում են իրագործելու նախկին ընդհանրական ժողովների ժամանակուան ընդհանրական եկեղեցու գաղափարը: Այսպիսիք շատ սխալւում են, որովհետեւ ընդհանրական կաթողիկէ եկեղեցու նախկին եկեղեցական կազմակերպութեան հիմունքն